Անոտացիա

«Վիճակագրական ծրագրավորում R-ով»

Հակիրճ բնութագիրը

«Վիճակագրական ծրագրավորում R-ով» առարկան նախատեսված է վերլուծական կարողությունների զարգացման, R-ով ծրագրավորման միջոցով տվյալների վերլուծության տիրապետելու համար:

Դասընթացը ներառում է բազային ֆունկցիաներին և փաթեթներին R-ում տվյալների մշակման և վերլուծության համար: Վերլուծական պրոցեսը իր հերթին ենթադրում է վիճակագրական հաշվարկների և ռեգրեսիոն հաշվարկների մեջ խորացում: Դասերի ընթացքում ուսանողները կծանոթանան նաև վիճակագրության ու տվյալների վերլուծության կիրառությանը ֆինանսներում և տնտեսագիտությունում:

Ասընթացի բովանդակությունը ներառում է R-ով ծրագրավորման հիմքերը, տվյալների մշակումը, տվյալների վիզուալիզացիան, վիճակագրական հիպոթեզների ստուգումը կանխատեսումը ռեգրեսիոն մոդելների միջոցով, սկորինգային մոդելներիկառուցումը լոգիստիկ ռեգրեսիաների միջոցով:

Տվյալ դասընթացը հնարավորություն է տալիս կիրառել R-ը վիճակագրության և տվյալների վերլուծության համար: Դասընթացը տալիս է գիտելիքներ կիրառելու այն ֆինանսների և տնտեսագիտության հետ առընչվող տարբեր ոլորտներում:

Ծանրաբեռնվածությունը կրեդիտներով եվ ժամերով– 1 կրեդիտ (36 ժամ)

Վերջնական ստուգման ձեվաչափը - քննություն

Կապը այլ առարկաների հետ

«Վիճակագրական ծրագրավորում R-ով» առարկան կապ ունի «Վիճակագրություն» և «Էկոնոմետրիկա» առարկաների հետ